

ՀՊՃՀ ՊՐՈՏԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳ

1. Վարկանիշային գնահատման նպատակը

Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի (ՊԴԿ) գործունեության վարկանիշային գնահատման հիմնական նպատակը դասախոսների ուսումնական, ուսումնամեթոդական, ուսումնակազմակերպչական, գիտական և հասարակական գործունեության արդյունավետության գնահատումն է՝ նրանց աշխատանքային գործունեության որոշակի ժամանակահատվածի կտրվածքով:

2. Վարկանիշային գնահատման խնդիրները

- 1) նպաստել դասախոսի մասնագիտական և մանկավարժական որակների շարունակական բարձրացմանը,
- 2) խթանել դասախոսների ուսումնակազմակերպչական գործունեության ակտիվությունը և նախաձեռնողականությունը,
- 3) նպաստել դասախոսների գիտական և գիտակազմակերպչական գործունեության արդյունավետության բարձրացմանը,
- 4) խրախուսել դասախոսների ներհամալսարանական և արտահամալսարանական գիտակրթական և հասարակական գործունեությունը,
- 5) գնահատել ուսանողների հավաքական կարծիքը դասախոսների դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ, ձևավորել համապատասխան հետևություններ ու երաշխավորություններ,
- 6) որոշել դասախոսների աշխատանքային գործունեության արդյունավետության վարկանիշային ցուցանիշները և ընդունել դրանք որպես հիմք նրանց մրցութային ընտրության, պաշտոնեական առաջընթացի և նյութական ու բարոյական խրախուսման միջոցների կիրառման դեպքերում:
- 7) համեմատական վերլուծության հիման վրա ստանալ տվյալներ Համալսարանի ստորաբաժանումների՝ ՊԴԿ-ով ապահովվածության որակական ցուցանիշների վերաբերյալ:

3. Վարկանիշային գնահատականի ձևավորման սկզբունքները

Դասախոսների վարկանիշային գնահատման սույն համակարգը ենթադրում է երեք ինքնուրույն գործընթացների իրականացում, որոնց արդյունքում ձևավորվում են վարկանիշային գնահատականի հետևյալ 3 հիմնական բաղադրիչները.

- 1) սահմանված ժամանակահատվածում դասախոսների գործունեության արդյունավետության գնահատական,
- 2) ուսանողների կողմից դասախոսներին և նրանց դասավանդման որակին տրված գնահատական,
- 3) ամբիոնի (կենտրոնի) կողմից դասախոսներին տրված գնահատական:

Գնահատման առաջին բաղադրիչի ձևավորման համար կիրառվում է հատուկ ձևաթերթ (Հավելված 1), որը պարունակում է տվյալների ենթաբաժիններ դասախոսների գործունեության հետևյալ ասպարեզների վերաբերյալ.

- ուսումնական, ուսումնամեթոդական և ուսումնակազմակերպչական,
- գիտական և գիտակազմակերպչական,
- ներհամալսարանական և արտահամալսարանական (հանրային) ծառայություններ:

Յուրաքանչյուր ենթաբաժնում ներառված են գնահատման որոշակի ցուցանիշներ համապատասխան գործակիցներով, որոնց միջոցով հաշվարկվում է ընդհանուր վարկանիշային գնահատականի առաջին բաղադրիչը:

Գնահատման երկրորդ բաղադրիչի ձևավորման համար հիմք է ծառայում ուսանողներին տրվող հարցաթերթը (Հավելված 2), որի լրացման արդյունքների մշակման հիման վրա հաշվարկվում է դասախոսի վարկանիշային գնահատականի երկրորդ բաղադրիչը:

Դասախոսների գնահատման համար ուսանողներին տրվող հարցերը խմբավորվում են հետևյալ երեք հիմնական ենթաբաժիններով.

- մասնագիտական գիտելիքներ/կարողություն/հմտություն,
- մանկավարժական ձիրքեր/դասավանդման մեթոդաբանություն,
- մարդկային որակներ/դասախոսի կերպար:

Գնահատման երրորդ բաղադրիչը ձևավորվում է ամբիոնի վարիչի (կենտրոնի տնօրենի) կողմից՝ հիմնվելով, հիմնականում, դասալսումների արդյունքների, ինչպես նաև գործընկերների կարծիքների և դասախոսի կողմից իր պարտականությունների կատարման հանդեպ ցուցաբերած վերաբերմունքի վրա: Ամբիոնի վարիչի (կենտրոնի տնօրենի) կողմից կազմակերպած դասալսումների արդյունքների գրանցման և գնահատման համար կիրառվում է հատուկ ձևաթերթ (Հավելված 3), նախատեսված դասախոսության, գործնական և լաբորատոր պարապմունքների համար:

Դասախոսի գործունեության վարկանիշային արդյունարար միավորը (գնահատականը) ձևավորվում է վերոնշյալ երեք բաղադրիչների արդյունքների գումարմամբ:

4. Գնահատման գործընթացի կազմակերպումը

1) Դասախոսների վարկանիշային գնահատումն իրականացվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա մայիսի 1-ից մինչև հունիսի 30-ը ժամանակահատվածում:

2) Գնահատման արդյունքներն ամփոփվում են մինչև սեպտեմբերի վերջը՝ դասախոսների ձևավորված արդյունարար վարկանիշային միավորների տեսքով:

3) Վարկանիշային գնահատման բոլոր երեք բաղադրիչների ձևավորումն իրականացվում է ՀՊՃՀ որակի ներքին ապահովման էլեկտրոնային առցանց համակարգի միջոցով:

4) Վարկանիշային տարեկան գնահատումը պարտադիր է ՀՊՃՀ հիմնական և ներքին համատեղությամբ աշխատող դասախոսական կազմի համար: Արտաքին

համատեղությամբ աշխատող դասախոսների համար պարտադիր է միայն հավելված 2 և հավելված 3-ով նախատեսված գնահատումը:

5) ՀՊՃՀ մասնագիտացված գիտակրթական 3 կենտրոնների դասախոսական կազմի համար գնահատման առաջին բաղադրիչի ձևաթերթում աստղանիշով (*) առանձնացված ցուցանիշները լրացման ենթակա չեն, ինչը չի ազդում վարկանիշային գնահատականի վրա:

6) Վարկանիշային գնահատման արդյունքներն ամփոփվում և դասակարգվում են թե՛ ըստ դասախոսական առանձին տարակարգերի և թե՛ ըստ առանձին ֆակուլտետների ու ամբիոնների:

7) Վարկանիշային գնահատման առաջին բաղադրիչի ձևաթերթային տվյալները, ներառյալ երրորդ բաղադրիչի արդյունարար գնահատականը, առցանց համակարգ են ներմուծվում դասախոսի հիմնական ուսումնական բեռնվածքն ապահովող ամբիոնի կողմից:

8) Վարկանիշային գնահատման երկրորդ բաղադրիչի տվյալները մուտքագրվում են համակարգ ուսանողների կողմից, մայիս-հունիս ամիսների ընթացքում ըստ տրված ժամանակացույցի՝ համակարգի կայքում տեղադրված անանուն հարցաթերթի առցանց լրացման միջոցով:

9) Սահմանված կարգով, վարկանիշային գնահատմանն առնչվող տվյալներն առցանց համակարգ մուտքագրվելուց հետո ենթակա չեն փոփոխման:

10) Դասախոսների տարեկան վարկանիշային գնահատման ողջ գործընթացի կազմակերպման հիմնական պատասխանատու օղակը ՀՊՃՀ Կրթական բարեփոխումների և զարգացման ծրագրերի (ԿԲնԶԾ) վարչությունն է, ի դեմս իր երկու բաժինների, ընդ որում՝

- Կրթության որակի վերահսկման և կառավարման բաժինը (մասնաճյուղերում՝ կրթության որակի ապահովման և վերահսկման բաժինը) կազմակերպում է տվյալների հավաքագրման գործընթացները, դրանց ամբողջականության ապահովումը և գնահատման արդյունքների ձևավորումը համակարգում,
- Զարգացման ռազմավարական ծրագրերի պլանավորման և ներդրման բաժինն իրականացնում է գնահատման արդյունքների վերջնամշակման, դրանց ամփոփման և հավաքական եզրակացությունների ձևավորման գործընթացները:

11) Դասախոսների գործունեության գնահատման առաջին բաղադրիչն ապահովող ձևաթերթային տվյալների հավաստիության և դրանց ժամանակին համակարգ ներմուծման պատասխանատվությունը կրում են ամբիոններն՝ ի դեմս ամբիոնի վարիչի, ում հաստատմամբ թույլատրվում է տվյալների մուտքագրումը էլեկտրոնային համակարգ:

12) Դասախոսների վերաբերյալ ուսանողների հարցումների կազմակերպման համար պատասխանատու են համապատասխան ֆակուլտետների ղեկանները՝ ԿԲնԶԾ վարչության պետի հետ համատեղ:

13) Դասախոսների վարկանիշային գնահատման գործընթացների ընդհանուր համակարգում, ի պաշտոնե, իրականացնում է ՀՊՃՀ միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի գծով պրոռեկտորը (մասնաճյուղերում՝ տնօրենը):

5. Գնահատման արդյունքների կիրառման և հրապարակման ձևերը

ՀՊՃՀ դասախոսների վարկանիշային գնահատման արդյունքներն իրավական հետևանքներ չեն հարուցում, և կարող են կիրառվել հետևյալ նպատակներով:

- ՀՊՃՀ ՊԴԿ տվյալների բազայի ստեղծում, որն արտացոլում է դասախոսական կազմի որակի և արդյունավետության հիմնական ցուցանիշները ինչպես համահամալսարանական, այնպես էլ առանձին ուսումնական կրթական ստորաբաժանումների (մասնաճյուղ, ֆակուլտետ, ամբիոն, կենտրոն) մակարդակներով:

- Ամբիոնների և առանձին դասախոսների կողմից իրենց գործունեության արդյունավետության պարբերական ինքնագնահատում և դրա հիման վրա մասնագիտական, ուսումնամեթոդական, մանկավարժական և գիտահետազոտական կարողությունների ու հմտությունների հետագա բարելավմանն ուղղված եզրակացությունների և երաշխավորությունների ձևավորում:

- Համալսարանի ՊԴԿ-ի մրցութային ձևավորման գործընթացներում:

- Համալսարանում որակի ներքին ապահովման եվրոպական ENQA ստանդարտի թիվ 1.4¹ բաղադրիչի գնահատում (ներքին մշտադիտարկում, արտաքին աուդիտ, հավատարմագրում և այլն):

- Որպես հիմք՝ դասախոսների ներքին և արտաքին խրախուսման տարբեր ձևերի կիրառման համար:

- Ըստ գործող տարակարգերի, ուս.տարվա արդյունքներով «Տարվա լավագույն դասախոս» անվանակարգի սահմանում և իրագործում:

- Համալսարանում դասախոսների աշխատանքի վարձատրության տարբերակված հավելավճարային համակարգի ներմուծում:

- Համալսարանում դասախոսական կազմի որակի և գործունեության արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության թափանցիկության շարունակական մեծացում և դրանով իսկ կոռուպցիոն ռիսկերի նվազեցում:

1) ՀՊՃՀ դասախոսների անվանական վարկանիշային գնահատման արդյունքները ներքին օգտագործման համար են և հանրային առցանց հրապարակման ենթակա չեն:

2) Գնահատման տվյալների ողջ հավաքածուն պահվում է ՀՊՃՀ որակի ներքին ապահովման էլեկտրոնային համակարգի արխիվում, որն ի պաշտոնե հասանելի է համալսարանի ռեկտորին, պրոռեկտորներին, ինչպես նաև համալսարանի գիտական քարտուղարին ու ԿԲնԶՕ վարչության պետին:

3) Մասնաճյուղի տնօրենը, ֆակուլտետի ղեկանը, ամբիոնի վարիչը և կենտրոնի տնօրենը վարկանիշային գնահատման արդյունքներին տիրապետում են

¹ Standards and Guidelines for Quality Assurance in the European Higher Education Area. ENQA, Part 1.4. Helsinki, Finland, 2009.

համապատասխանաբար իրենց մասնաճյուղի, ֆակուլտետի, ամբիոնի և կենտրոնի դասախոսական կազմին վերաբերող տվյալների շրջանակներում:

4) Դասախոսին իր վարկանիշային գնահատման տվյալները տրամադրվում են ամբիոնի վարիչի (կենտրոնի տնօրենի) կողմից:

5) Ամբիոնի վարիչի հայեցողությամբ դասախոսների վարկանիշային գնահատման անվանական և ընդհանուր արդյունքները կարող են հրապարակվել և քննարկվել ամբիոնի նիստի շրջանակներում՝ համապատասխան եզրակացությունների կայացման և ամբիոնի ու առանձին դասախոսների գործունեության արդյունավետության հետագա բարձրացմանն ուղղված երաշխավորությունների ձևավորման նպատակով:

6) Դասախոսի մրցութային ընտրության կամ պաշտոնեական առաջխաղացման առանձին դեպքերում, ամբիոնի նիստի որոշմամբ, նրա վարկանիշային գնահատման տվյալները, կարող են տրամադրվել նշված գործընթացներին առնչվող մարմիններին՝ համապատասխան եզրակացություն ձևավորելու նպատակով:

Հավելված 1

ՀՊՃՀ պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության որակի արդյունավետության վարկանիշային տարեկան գնահատման ձևաթերթ

1. Դասախոսի ընդհանուր տվյալներ (բնութագրեր)*

Դասախոսի անուն, ազգանուն
 Մասնաճյուղ
 Ֆակուլտետ
 Ամբիոն

1	Գիտական աստիճան	(Ընտրում է հետևյալ տարբերակներից) <ol style="list-style-type: none"> 1. Գիտությունների դոկտոր 2. Գիտությունների թեկնածու 3. Առանց գիտական աստիճանի
2	Գիտական կոչում	(Ընտրում է հետևյալ տարբերակներից) <ol style="list-style-type: none"> 1. Պրոֆեսորի գիտական կոչում 2. Դոցենտի գիտական կոչում 3. Առանց գիտական կոչման
3	Զբաղեցրած պաշտոն	(Ընտրում է հետևյալ տարբերակներից) <ol style="list-style-type: none"> 1. Պրոֆեսոր 2. Դոցենտ 3. Ասիստենտ 4. Դասախոս
4	Տիրապետում է օտար լեզուների	(տրվում է լեզուների ցանկ, ընտրում է իր տիրապետած լեզուն/երը) (նշում է լեզվի տիրապետման մակարդակը)

		1. Ազատ 2. Կարող եմ բացատրվել 3. Օգտվում եմ մասնագիտական գրականությունից	
5	Ընդհանուր աշխատանքային փորձ, որից՝	Ընդհանուր ___ տարի	ՀՊՃՀ-ում ___ տարի
	1. Մանկավարժական	Ընդհանուր ___ տարի	ՀՊՃՀ-ում ___ տարի
	2. Գիտահետազոտական	Ընդհանուր ___ տարի	ՀՊՃՀ-ում ___ տարի
	3. Վարչական	Ընդհանուր ___ տարի	ՀՊՃՀ-ում ___ տարի
6	Ուսանողների առաջադիմություն դասավանդած խմբերում, հոսքերում (միջին թվաքանակական)		
7	Վերապատրաստման կրեդիտների քանակը		

* Ծանոթություն. Սույն բաժնի տվյալները նշվում են միայն որպես փաստեր, և վարկանիշային միավորներ չեն շնորհում:

2. Ուսումնական, ուսումնամեթոդական և ուսումնակազմակերպչական գործունեություն

Ուսումնական բեռնվածք *	հայերեն (1)	ռուսերեն (2)	անգլերեն (3)	Ընդամենը (վարկանիշային միավոր) **
Դասախոսություն (2)				
Գործնական պարապմունք, լաբորատոր, կուրսային աշխատանք, պրակտիկայի ղեկավարում (1)				
Ավարտական աշխատանքի ղեկավարում (1)				
Մագիստրոսական թեզի ղեկավարում (2)				

* Ծանոթություն. Յուրաքանչյուր կետի համար հաշվվում է վարկանիշային միավոր՝ բազմապատկելով տողի և սյան գործակիցները: Լրացնողը նշում է կատարում համապատասխան վանդակում:

** Ծանոթություն. Այս և հաջորդող աղյուսակներում ընդհանուր վարկանիշային միավորը հաշվվում է որպես տողի միավորների գումար:

Տպագրված ուսումնամեթոդական աշխատանքներ*	հայերեն (1)		ռուսերեն (2)		անգլերեն (3)		Ընդամենը (վարկանիշային միավոր)
	Հեղինակ (1)	համահեղինակ (0.5)	Հեղինակ (1)	համահեղինակ (0.5)	Հեղինակ (1)	համահեղինակ (0.5)	
Դասագիրք (3)							
Ուսումնական ձեռնարկ (2)							
Մեթոդական ցուցումներ (1)							
Թեստեր, հարցաշարեր (2)							
Ուսումնամեթոդական աշխատանքի գրախոսում (1)							

* Ծանոթություն. Յուրաքանչյուր կետի համար հաշվվում է վարկանիշային միավոր՝ բազմապատկելով տողի և սյան համապատասխան գործակիցները: Լրացնողը նշում է քանակ համապատասխան վանդակում:

Էլեկտրոնային միջոցների կիրառում*	Ընդամենը (վարկանիշային միավոր)
Դասախոսությունների ստեղծում (2)	
Դասախոսությունների վարում (1)	
Մուլտիմեդիա/վիրտուալ լաբորատոր աշխատանքների ստեղծում (3)	

* Ծանոթություն. Յուրաքանչյուր կետի համար հաշվվում է վարկանիշային միավոր՝ ըստ տողի գործակցի: Լրացնողը նշում է կատարում համապատասխան վանդակում:

Կրթական և/կամ առարկայական ծրագրերի մշակում*	հայերեն (1)		ռուսերեն (2)		անգլերեն (3)		Ընդամենը (վարկանիշային միավոր)
	հեղինակ (1)	համահեղինակ (0.5)	հեղինակ (1)	համահեղինակ (0.5)	հեղինակ (1)	համահեղինակ (0.5)	
Կրթական ծրագրի մշակում (5)							
Առարկայական ծրագրի մշակում (3)							
Լաբորատոր սարքերի և այլ օժանդակ գործիքամիջոցների ստեղծում (2)							

* Ծանոթություն. Յուրաքանչյուր կետի համար հաշվվում է վարկանիշային միավոր՝ բազմապատկելով տողի և սյան համապատասխան գործակիցները: Լրացնողը նշում է քանակ համապատասխան վանդակում:

Ուսումնակազմակերպչական գործունեություն*	Ընդամենը (վարկանիշային միավոր)
Ամբիոնի ղեկավարում (վարիչ) (3)	
Ծրագրային հանձնաժողովի նախագահ (2)	
Ծրագրային հանձնաժողովի անդամ (1)	
Ֆակուլտետի խորհրդի (մասնաճյուղի գիտխորհրդի) անդամ (2)	
Ֆակուլտետի/մասնաճյուղի որակի ապահովման հանձնաժողովի անդամ (2)	
Ակադեմիական խմբի ղեկավար (կուրսղեկ) (1)	

* Ծանոթություն. Յուրաքանչյուր կետի համար հաշվվում է վարկանիշային միավոր՝ ըստ տողի գործակցի: Լրացնողը նշում է կատարում համապատասխան վանդակում:

3. Գիտական և գիտակազմակերպչական գործունեություն

Գիտական աշխատանքներ*	Հանրապետական (1)					Միջազգային (2)					Ընդամենը (վարկանիշային միավոր)	
	հայ. (1)		ռուս. (2)		օտար լեզվով (3)	հայ. (1)		ռուս. (2)		օտար լեզվով (3)		
	հեղինակ (1)	համահեղինակ (0.5)	հեղինակ (1)	համահեղինակ (0.5)	հեղինակ (1)	համահեղինակ (0.5)	հեղինակ (1)	համահեղինակ (0.5)	հեղինակ (1)	համահեղինակ (0.5)		
Մենագրություն (4)												
Գիտական հոդված (2)												
Գյուտի արտոնագիր(2)												
Զեկույցներ գիտաժողովներում (1)												
Դոկտ., թեկն.ատենախոսության ընդդիմախոս (1)												

* Ծանոթություն. Յուրաքանչյուր կետի համար հաշվվում է վարկանիշային միավոր՝ բազմապատկելով տողի և սյան համապատասխան գործակիցները: Լրացնողը նշում է քանակ համապատասխան վանդակում:

Ատենախոսություններ*	Թեկնածուական (1)		Դոկտորական (2)		Ընդամենը (վարկանիշային միավոր)
	Տեղացի (1)	Արտասահմանցի (2)	Տեղացի (1)	Արտասահմանցի (2)	
Ատենախոսության ղեկավարում/գիտական խորհրդատու					
Դասախոսի ղեկավարությամբ/գիտական խորհրդատվությամբ պաշտպանածատենախոսություններ					
Դասախոսի կողմից պաշտպանվածատենախոսություն	(3)		(5)		

* Ծանոթություն. Յուրաքանչյուր կետի համար հաշվվում է վարկանիշային միավոր՝ բազմապատկելով տողի և սյան համապատասխան գործակիցները: Լրացնողը նշում է կատարում համապատասխան վանդակում:

Աշխատանք ուսանողի հետ*	Հանրապետական (1)		Միջազգային (2)		Ընդամենը (վարկանիշային միավոր)
	Մասնակից (0.5)	Մրցանակակիր (1)	Մասնակից (0.5)	Մրցանակակիր (1)	
Օլիմպիադաներին, մրցումներին, ցուցահանդեսներին ուսանողների մասնակցության նախապատրաստում					
Դասախոսի ղեկավարությամբ ուսանողի հրատարակած հոդված, թեզիս և/կամ զեկույց գիտաժողովում	(1)		(1)		

* Ծանոթություն. Յուրաքանչյուր կետի համար հաշվվում է վարկանիշային միավոր՝ բազմապատկելով տողի և սյան համապատասխան գործակիցները: Լրացնողը նշում է կատարում համապատասխան վանդակում:

Գիտակազմակերպչական գործունեություն*	Ընդամենը (վարկանիշային միավոր)
Գիտական աստիճան շնորհող մասնագիտական խորհրդի հիմնական անդամ (1.5)	
Գիտական դրամաշնորհային ծրագրի ղեկավար (2)	
Գիտական դրամաշնորհային ծրագրի մասնակից (1)	
Գիտական պարբերականի խմբագրական խորհրդի նախագահ (3)	
Գիտական պարբերականի խմբագրական խորհրդի անդամ (1.5)	
Միջազգային գիտաժողովի ծրագրային կոմիտեի անդամ (1)	

* Ծանոթություն. Յուրաքանչյուր կետի համար հաշվվում է վարկանիշային միավոր՝ ըստ տողի գործակցի: Լրացնողը նշում է կատարում համապատասխան վանդակում:

4. Ներհամալսարանական և արտահամալսարանական (հանրային) ծառայություններ

Ներհամալսարանական գործունեություն*	Ընդամենը (վարկանիշային միավոր)
ՀՊՃՀ կառավարման խորհրդի անդամ (1)	
ՀՊՃՀ (մասնաճյուղի) գիտական խորհրդի անդամ (1)	
ՀՊՃՀ գիտական խորհրդին կից մշտական հանձնաժողովների նախագահ/անդամ (2)	

* Ծանոթություն. Յուրաքանչյուր կետի համար հաշվվում է վարկանիշային միավոր՝ ըստ տողի գործակցի: Լրացնողը նշում է կատարում համապատասխան վանդակում:

Արտահամալսարանական գործունեություն*	Հանրապետական (1)	Միջազգային (2)	Ընդամենը (վարկանիշային միավոր)
Մասնակցություն արտահամալսարանական հանձնաժողովներում (2)			
Մասնակցություն մասնագիտական խորհուրդներում (2)			
Մասնակցություն արտահամալսարանական փորձագիտական աշխատանքներում (2)			
Դրամաշնորհային (ոչ գիտական) ծրագրերի ղեկավար (2)			
Դրամաշնորհային (ոչ գիտական) ծրագրերի մասնակից (1)			

* Ծանոթություն. Յուրաքանչյուր կետի համար հաշվվում է վարկանիշային միավոր՝ բազմապատկելով տողի և սյան համապատասխան գործակիցները: Լրացնողը նշում է կատարում համապատասխան վանդակում:

ԴԱՍԱԽՈՍԸ ՌԻՍԱՆՈՂԻ ՀԱՅԱՑՔՈՎ
Հարցաթերթ

Միրելի՛ պոլիտեխնիկցի ուսանող

Այս հարցման նպատակն է՝ բարձրացնել ՀՊՃՀ ուսումնական գործընթացի որակը և լավարկել դասավանդումը: Հարցման միջոցով Ձեզ հնարավորություն է տրվում գնահատել դասախոսի գործունեությունը: Հարցումն անանուն է (Ձեր անունը որևէ տեղ չի նշվում): Խնդրում ենք լինել օբյեկտիվ և անկեղծ: Ձեր պատասխանները շատ արժեքավոր են:

Կանխավ շնորհակալություն

Դասախոս

Դասընթաց

Խումբ _____

Կուրս

Բակալավր 1 2 3 4 5

Մագիստրոս 1 2 3

1. Որքանո՞վ եք կարևորում այս դասընթացը Ձեր մասնագիտության համար:
 1. Կարևոր է
 2. Կարևոր չէ
 3. Դժվարանում եմ պատասխանել

2. Այս դասընթացի մոտավորապես քանի՞ տոկոսին եք ներկա եղել:
 1. 0-25%
 2. 26-50%
 3. 51-75%
 4. 76-100%

3. Խնդրում ենք ընթերցել դասախոսի գործունեության վերաբերյալ յուրաքանչյուր կետ և նշել Ձեր համաձայնության աստիճանը 1-5 գնահատականով, որտեղ 1-ը նշանակում է «բոլորովին համամիտ չեմ», 5-ը՝ «լիովին համամիտ եմ»: Եթե դժվարանում եք գնահատել տվյալ գործունեությունը, ապա նշում եք 0՝ «դժվարանում եմ գնահատել»:

1	2	3	4	5	0
Բոլորովին համամիտ չեմ	Համամիտ չեմ	Մասամբ համամիտ եմ	Համամիտ եմ	Լիովին համամիտ եմ	Չեմ կարող գնահատել

N	Գործունեություն	1	2	3	4	5	0
Մասնագիտական գիտելիքներ/ կարողություն/ հմտություն							
1	Նյութը մատուցում է հասկանալի	1	2	3	4	5	0
2	Նյութի վերաբերյալ տրամադրում է դասագրքեր, մասնագիտական գրականություն (կամ դրանց ցանկը)	1	2	3	4	5	0
3	Ներկայացնում է դասընթացի գնահատման վերաբերյալ պահանջները	1	2	3	4	5	0
4	Կարողանում է պատասխանել առարկայի վերաբերյալ տրվող լրացուցիչ հարցերին	1	2	3	4	5	0
5	Ունի բազմակողմանի գիտելիքներ	1	2	3	4	5	0
6	Ուսանողին կողմնորոշում է առարկայական բնագավառում	1	2	3	4	5	0
7	Ցույց է տալիս տվյալ առարկայի կապն այլ առարկաների հետ	1	2	3	4	5	0
Մանկավարժական ձիրքեր/ դասավանդման մեթոդաբանություն							
10	Լավ է կազմակերպում դասաժամը (ներկայանում է և դասն ավարտում է ժամանակին, հստակ է բաշխում դասաժամը)	1	2	3	4	5	0
11	Կարողանում է կառավարել լսարանը	1	2	3	4	5	0
12	Ոգևորվածությամբ է դասավանդում առարկան, որով հետաքրքրություն է առաջացնում առարկայի նկատմամբ	1	2	3	4	5	0
13	Օգտագործում է ժամանակակից միջոցներ (էլեկտրոնային և այլ)	1	2	3	4	5	0
14	Կիրառում է դասավարման ինտերակտիվ մեթոդներ Պատկերավոր դասախոսություն (պատկերավոր դասախոսություն, մտագրոհ, աշխատանք փոքր խմբերում, քննարկումներ ու բանավեճեր)	1	2	3	4	5	0
15	Խրախուսում է ուսանողի ակտիվությունը դասի ժամանակ	1	2	3	4	5	0
16	Խրախուսում է ուսանողի ինքնուրույն աշխատանքը	1	2	3	4	5	0
17	Պատրաստ է լսել ուսանողին	1	2	3	4	5	0
18	Բավարար է իրականացնում գիտելիքների միջանկյալ և ամփոփիչ ստուգման գործընթացը	1	2	3	4	5	0
19	Ուսանողի աշխատանքը վերադարձնում է ուղղորդիչ նշումներով և ժամանակին	1	2	3	4	5	0
20	Համբերատար է նյութը դժվար յուրացնող ուսանողների հանդեպ	1	2	3	4	5	0
21	Անհատական աշխատում է ուսանողի հետ (խորհրդատվություն, հարցերի լրացուցիչ քննարկում և այլն)	1	2	3	4	5	0
Մարդկային որակներ / դասախոսի կերպար							
21	Ուսանողի նկատմամբ ուշադիր է, պատրաստ է լսել և	1	2	3	4	5	0

	հասկանալ նրա անձնական խնդիրները						
22	Ուսանողներին վերաբերվում է հարգալից	1	2	3	4	5	0
23	Գնահատում է արդարացի և անկողմնակալ, կոռումպացված չէ	1	2	3	4	5	0
24	Պատրաստակամ է լրացուցիչ խորհրդատվություն տրամադրել	1	2	3	4	5	0
25	Մտահոգ է ուսանողի մասնագիտական զարգացման և հաջողությունների համար	1	2	3	4	5	0
26	Ունակ է ուղղելու ուսանողի սխալը՝ չվիրավորելով նրա ինքնասիրությունը	1	2	3	4	5	0
27	Ունի դասախոսին հարիր կեցվածք և արտաքին տեսք	1	2	3	4	5	0
28	Հետաքրքիր մարդ է, նրանից շատ բան ես սովորում	1	2	3	4	5	0
29	Կուզենայի նմանվել այդ դասախոսին	1	2	3	4	5	0

4. Ի՞նչ կառաջարկեիք դասախոսին իր մասնագիտական և մարդկային որակները լավարկելու համար:

Շնորհակալություն հարցմանը մասնակցելու համար

Հավելված 3

Տարբերակ 1

**Դասալսման պլան
(ձևայնացված)**

Դասախոսության, գործնական և լաբորատոր պարապմունքների համար

Դասախոս _____

Ստարկա _____

Ուս.տարի _____

Դիտող _____

Ուսանողների քանակ _____

Դիտման ամսաթիվ __/__/____

Գնահատման սանդղակ

3— իրականացվել է շատ լավ

2— իրականացվել է որոշակիորեն

1— իրականացվել է ոչ այդքան լավ

0— չի դիտվել/դժվար է գնահատել

	Դիտման ասպեկտները	Գնահատական			
<i>1. Նախաբան և կողմնորոշում</i>					
	Բացատրում է նյութի նպատակն ու խնդիրները	3	2	1	0
	Ներկայացնում է նախորդ նյութի հետ կապը	3	2	1	0
	Բացատրում է առարկայի մեջ տվյալ նյութի տեղը	3	2	1	0
<i>2. Գիտելիք</i>					
	Ներկայացնում է նյութի էությունը	3	2	1	0
	Լավ է հասկանում նյութը	3	2	1	0
	Հստակեցնում է բացատրությունները	3	2	1	0
	Ուսանողների հարցերին տալիս է արդյունավետ պատասխաններ	3	2	1	0
	Նյութը շարադրում է ընդհանուր տրամաբանությամբ և հաջորդականությամբ	3	2	1	0
<i>3. Ուսանողների ներգրավվածություն</i>					
	Հարց է տալիս և սպասում պատասխանի	3	2	1	0
	Հոետորական հարցեր է հնչեցնում (որպես քննարկման մաս)	3	2	1	0
	Պահանջում է ուսանողներից, որպեսզի մասնակցեն հարցի քննարկմանը	3	2	1	0
	Ներգրավվում է փոքր խմբերի քննարկումներում	3	2	1	0
<i>4. Վերաբերմունք</i>					
	Հետաքրքրված է, ոգևորված է առարկայով	3	2	1	0
	Ուսանողների մոտ հետաքրքրություն է առաջացնում առարկայի հանդեպ	3	2	1	0
	Նյութը շարադրում է հասանելի	3	2	1	0
	Ընդունում է ուշացած ուսանողին	3	2	1	0
	Հիշում է ուսանողների անունները և նրանց դիմում է անունով	3	2	1	0
	Ուսանողներին վերաբերվում է հարգանքով	3	2	1	0
<i>5. Տեխնիկա</i>					
	Օգտագործում է աուդիովիզուալ նյութ (օրինակ՝ Power Point), ուսումնասովանողական նյութեր, սարքեր	3	2	1	0
	Պրեզենտացիան միօրինակ չէ	3	2	1	0
	Շեշտադրում է նյութի հատվածների միջև անցումները	3	2	1	0
	Շեշտադրում է կարևոր պահերը	3	2	1	0
	Հարցերը բացատրելու ունակություն ունի (նմանատիպ դեպքերի, օրինակների և այլ միջոցների օգտագործմամբ)	3	2	1	0
	Լսարարանի հետ պահում է տեսողական կապ	3	2	1	0

Խոսում է հստակ	3	2	1	0
Պահում է համապատասխան տեմպ	3	2	1	0
Պարբերաբար հստակեցնում է տերմինները	3	2	1	0
Գրում է պարզ	3	2	1	0
Անհրաժեշտության դեպքում համապատասխան նյութ է տրամադրում	3	2	1	0
<i>6. Ամփոփում</i>				
Կրկնում է եզրահանգումները	3	2	1	0
Առաջարկում է հարցեր տալ	3	2	1	0
Պատասխանում է հարցերին	3	2	1	0
Խոսում է հաջորդ դասախոսության մասին	3	2	1	0
Ավարտում է ժամանակին	3	2	1	0
<i>7. Ճշտապահություն</i>				
Լսարան է մտնում ժամանակին	3	2	1	0
Ուսանողների ուշացումը հինգ րոպեի սահմանում է	3	2	1	0
8. Աշխատանք խմբերի հետ (միայն գործնական դասաժամերի համար)				
Ի սկզբանե հստակեցնում է առաջադրանքը	3	2	1	0
Խրախուսում է քննարկումները	3	2	1	0
Ղեկավարում է քննարկումը	3	2	1	0
Անհրաժեշտության դեպքում լիազորում է ուսանողներին խմբային առաջնորդության պատասխանատվությունը	3	2	1	0
Հարցեր է տալիս, խնդիրներ է առաջադրում	3	2	1	0
Ուսանողներին առաջարկում է հարցեր տալ	3	2	1	0
Պատշաճ ձևով պատասխանում է ուսանողների հարցերին	3	2	1	0
Մրցակցություն է մտցնում ուսանողների միջև	3	2	1	0
Հարմարավետ է զգում իրեն խմբային առաջնորդի դերում	3	2	1	0
Եզրափակում է ասելիքը՝ ամփոփելով և հակիրճ կրկնելով	3	2	1	0
8. Աշխատանք խմբերի հետ (միայն լաբորատոր պարապմունքների համար)				
Լաբորատոր աշխատանքից առաջ բացատրում է ուսանողներին, թե ինչ է իրենցից ակնկալվում/պահանջվում	3	2	1	0
Բացատրում է անվտանգության և այլ ընթացակարգային հարցեր	3	2	1	0
Կարողանում է պատշաճ ձևով պատասխանել ուսանողների հարցերին	3	2	1	0
Խրախուսում է ուսանողների կողմից հարցեր տալը	3	2	1	0
Խրախուսում է ուսանողների մասնակցությունը/համագործակցությունը	3	2	1	0
Հստակորեն բացատրում է տերմինները և ընթացակարգը	3	2	1	0
Նյութի, սարքերի հետ աշխատում է վստահ	3	2	1	0
Ոգևորվածությամբ է ցուցադրում և հետաքրքրություն է առաջացնում լաբորատոր առաջադրանքի հանդեպ	3	2	1	0

Ունի համապատասխան գիտելիքներ լաբորատոր դասաժամի բովանդակության մասին	3	2	1	0
--	---	---	---	---

Լրացուցիչ մեկնաբանություններ

Հավելված 3

Տարբերակ 2

**Դասընթացի դասալսման պլան
(ձևայնացված)**

Դասախոսը _____

Դասընթացի անվանումը _____

Պարապմունքի տեսակը _____

Ուս.տարին _____

Դասալսողը _____

Ուսանողների քանակը _____

Դասալսման ամսաթիվը __/__/____

- Գնահատման սանդղակ
- 3— իրականացվել է շատ լավ
 - 2— իրականացվել է որոշակիորեն
 - 1— իրականացվել է ոչ այդքան լավ
 - 0— չի դիտվել/դժվար է գնահատել

Դասալսման ասպեկտները	Գնահատական											
	Դասախոսություն				Գործնական պարապմունք				Լաբորատոր պարապմունք			
1. Նախաբան և կողմնորոշում												
Բացատրում է թեմայի նպատակն ու խնդիրները	3	2	1	0	3	2	1	0	3	2	1	0
Ներկայացնում է նախորդ թեմայի հետ կապը	3	2	1	0	3	2	1	0				
Բացատրում է դասընթացում տվյալ նյութի տեղը	3	2	1	0								
2. Գիտելիք												
Ներկայացնում է նյութի էությունը	3	2	1	0	3	2	1	0	3	2	1	0
Հստակեցնում է բացատրությունները	3	2	1	0	3	2	1	0	3	2	1	0
Դասընթացի թեմայի վարումն ունի ընդհանուր տրամաբանություն և հաջորդականություն	3	2	1	0	3	2	1	0	3	2	1	0
3. Ուսանողների ներգրավվածություն												

Հարց է տալիս և սպասում պատասխանի	3	2	1	0	3	2	1	0				
Հոետորական հարցեր է հնչեցնում (որպես քննարկման մաս)	3	2	1	0	3	2	1	0				
Պահանջում է ուսանողներից մասնակցելու հարցի քննարկմանը	3	2	1	0	3	2	1	0	3	2	1	0
Ներգրավվում է փոքր խմբերի քննարկումներում	3	2	1	0	3	2	1	0	3	2	1	0
4. Վերաբերմունք												
Հետաքրքրված է, ոգևորված է առարկայով	3	2	1	0	3	2	1	0	3	2	1	0
Նպատակաուղղված միջոցներ է ձեռնարկում՝ ուսանողների մոտ դասընթացի հանդեպ հետաքրքրվածության ձևավորման համար	3	2	1	0	3	2	1	0	3	2	1	0
Նյութը շարադրում է հասանելի	3	2	1	0	3							
5. Տեխնիկա												
Օգտագործում է լրացուցիչ ակնդետ նյութեր (օրինակ, սլայդներ)	3	2	1	0	3	2	1	0	3	2	1	0
Թեմայի ներկայացումը միօրինակ չէ	3	2	1	0	3	2	1	0				
Շեշտադրում է թեմայի հատվածների միջև անցումները	3	2	1	0	3	2	1	0				
Շեշտադրում է կարևոր պահերը	3	2	1	0	3	2	1	0				
Հստակ տարբերակում է սկզբունքները, օրինակները և առաջարկները	3	2	1	0	3	2	1	0	3	2	1	0
Լսարարանի հետ պահում է տեսողական կապ	3	2	1	0	3	2	1	0	3	2	1	0
Խոսում է հստակ	3	2	1	0								
Պահում է համապատասխան տեմպ	3	2	1	0								
Պարբերաբար հստակեցնում է տերմինները	3	2	1	0								
Գրում է պարզ	3	2	1	0								
Անհրաժեշտության դեպքում համապատասխան նյութ է տրամադրում	3	2	1	0	3	2	1	0	3	2	1	0
6. Ամփոփում												
Կրկնում է եզրահանգումները	3	2	1	0								
Առաջարկում է հարցեր տալ	3	2	1	0	3	2	1	0	3	2	1	0
Պատասխանում է հարցերին	3	2	1	0	3	2	1	0	3	2	1	0
Խոսում է հաջորդ թեմայի մասին	3	2	1	0	3	2	1	0	3	2	1	0
Ավարտում է ժամանակին	3	2	1	0	3	2	1	0	3	2	1	0
7. Ճշտապահություն												
Լսարան է մտնում ժամանակին	3	2	1	0	3	2	1	0	3	2	1	0
Ուսանողների ուշացումը հինգ րոպեի սահմանում է	3	2	1	0	3	2	1	0	3	2	1	0

Լրացուցիչ մեկնաբանություններ